

ԵՐԵՎԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցաւալի է.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էջմիած-
նի աստուածաբանին. երկրաշարժից ֆեաւած-
ների օգտին. Նամակ Շամախուց. Նամակ Բա-
ղուց. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Շվեյցարիայից:

Յ Ա Ի Ա Լ Ի Է

Մեծ Պատի երկրորդ շաբաթից Թիֆլի-
սում նորից կը բացվին թատրոնները եւ
կը սկսին թէ օպերային եւ թէ դրամա-
տիկական ներկայացումները: Մայրաքաղաք-
ներից եւ արտասահմանից սպասվում են
նշանաւոր երգիչներ եւ երգչուհիներ, որոնք
պէտք է հանգէս գան թէ օտար եւ թէ
ուրուսաց օպերաներում:

Մենք դեմ ոչինչ չունենք ոչ օպերային
եւ ոչ դրամատիկական ներկայացումներին,
մենք ընդունում ենք նրանց զեղարուես-
տական եւ գաղափարական նշանակութիւնը,
մենք տուել ենք եւ տալու ենք հաշիւներ
մեր ընթերցողներին այդ ներկայացումների
մասին, սակայն պէտք է խոստովանենք, որ
մի մեծ պակաս մնում է մինչեւ այժմ չը
լրացված եւ շատ աչքի է ընկնում, երբ
դուք նկատում էք, թէ ինչքան մեծ զո-
հարութիւններ են անվում մեր յիշած
գործարձութիւնների համար: Մենք աչքի
տալով ունենք կրթական դասախօսութիւն-
ների, գրական եւ գիտական համախմբում-
ների եւ ժողովների պակասութիւնը:

Որքան հետաքրքրական ժամանակակից
հարցեր կան վերաբերեալ թէ ընթացիկ եւ
թէ հին գրականութեան, որքան նոր
նշանակումներ են կատարվում գիտութեան
եւ արհեստի ասպարէզներում, որքան հա-
տարական երեւոյթներ կարիք են դրում
ուսումնասիրութեան եւ լուսարանութեան:
Այդ բոլոր հարցերը կարող էին ներթ ծա-
ւայել դասախօսութիւնների, զեկուլում-
ների եւ զրոյցների համար:

Մեր երկտասարդ ոյժերը պէտք է ա-

ռանձին ուշադրութիւն դարձնեն մեր
կենսի այդ պակասի վրա եւ աշխատեն
նրան լրացնել: Իւրաքանչիւր, վերջնելով
իր վրա մի որոշ յանձնարարութիւն, կը
նպաստէ, որ կատար ածվի մի փոքր ի
շատէ պատկառելի ձեռնարկութիւն: Սա-
կայն առայժմ չէ երեւում շարժում այդ
ողով եւ նոյն իսկ մեր գիտական ընկերու-
թիւնները չեն ցոյց տալիս ոչ մի առան-
ձին հակում յաճախակի նիստեր գրաւելու
եւ եռանդուն գործունէութիւն ցոյց տալու:
Ցաւալի է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷԶՄԻԱՇՆԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԻՆ

II

Չքմեղութեան, անդիտութեան քօղով գլուխ
ծածկելը եւ չինձու անմեղութեան հեծեծանք
արձակելը Կարապետ վարդապետի ամենամեծ
գէշնքն է: Անա նա ինձ գէշ հանում է մի այս-
պիսի մեղադրանք:

Էջմիածնի աստուածաբանները գրել են յօ-
դուածներ աթաղականութեան եւ երկարակու-
թեան մասին, իսկ եւ այդ առիթով յարձակվել
են աստուածաբանների վրա, մինչդեռ երբ մի
ուրիշը գրել է այդ կամ այդպիսի նիւթի մա-
սին, եւ գովել եւս Զարմանալի մարդ եմ ես,
եթէ դատէր Կարապետ վարդապետի նկարա-
գործիւնից: Ես ինքս էլ գրել եմ Քաղկեդօնի
ժողովի մասին, եւ ինքս էլ, ուրեմն, մի կամ
երկու բնութիւնների հարցն եմ շօշափել այս-
պէս կամ այնպէս, բայց այնքան անհամբերող
եմ, որ չեմ թող տալիս էջմիածնի աստուածա-
բաններին գրել նոյն հարցի մասին Դա ուղ-
ղակի ցոյց է տալիս, որ ես մի անդուստր, փա-
նատիկոսական աստուծութիւն ունեմ գէշ պի ա-
ստուածաբանները: Խեղճ մարդիկ էլ ինչի մա-
սին կարող են գրել: Եւ սակայն, եւ թող չեմ
տալիս:

Այսպէս է ցոյց տալիս Կարապետ վարդա-
պետը: Բայց վերջինք չքմեղութեան քօղը նրա
աստուածաբանական գլխից եւ տեսնենք, թէ
ինչ են առում փաստերը:
1896 թվականն էր: Թիւրքաց Հայաստանը

ներկայացնում էր մի տեսարան, որ Լէնկթէ-
մուրի ժամանակներն էր ինչեցնում: Ամեն ինչ
կար,—եւ աւերակ, եւ արիւն, եւ բերաւոր նա-
հատակներ: Պատմութիւնը կրկնվել էր անգլի
ճշտութեամբ: Պակասում էր մի բան միայն.
արիւննուշտ զազանութեան փռած աւերակ-
ների վրա, ինչպէս հնում, չէին լսվում վէճեր
մի կամ երկու բնութեան, բաժակի մէջ ջուր
խառնելու կամ չը խառնելու մասին: Ի՞նչ էր
դա նշանակում: Փոխվել էր հայի ճակատագիրը,
լուր էր կրօնական եղբայրաբան անհաշուու-
թիւնը: Այսպէս էր թուում Բայց հէնց այդ մի-
ջողին, հէնց այդ 1896 արիւնտ թւականին,
էջմիածնը եւ վենետիկը շտապեցին ցոյց տալ,
որ չէ մեռել հին հրէշը: Նրանք վերանորոգեցին
Պրիզոր Տաթեւացու ժամանակները: Կատաղի
բանակուր սկսվեց երկու վանքերի մէջ Վիա-
նտիւթեան եւ երկարակութեան մասին:

Ես խիստ յարձակվեցայ երկու կողմերի վրա
էլ: Կարապետ վարդապետը չէ կարող մի ան-
նշան փաստ անգամ առաջ բերել, որ ցոյց տար,
թէ եւ կողմնապահ եմ եղել, թէ եւ ինչպիսի
եմ վիճող կողմերից մէկն ու մէկը: «Մշակի»
1896 թ. № 86-ի մէջ եւ գրում էի. «Այն ժա-
մանակ, երբ օտար եւ հեռուոր Անգլիայի եկե-
ղեցիներում յատկապէս պատրաստված աղօթք-
ներ են կարդացվում Փոքր-Ասիայի թշուառ
քրիստոնեաների համար, այն ժամանակ, երբ
աւելի եւս հեռուոր Ամերիկայի իր յազանքն է
յայտնում այդ նոյն նահատակ քրիստոնեանե-
րին,—վենետիկն եւ էջմիածնը նստում են
միմեանց կողքին եւ միմեանց միմեան կողմ-
նում: Յովնան Իմաստասէրների, Լամբրոսացի-
ների, Պրիզոր Տղամերի խօսքերով:

Անա ինչ ժամանակ եւ ինչ տոթիթով եմ եւ
դատաւարութիւն աստուածաբանական սխալաւոր-
կան, անստուծութիւն: Այն ժամանակ էլ էջ-
միածնի աստուածաբանները իրանց «Արարատի»
քունը ու պոռնիկներից աղաղակում էին ինձ
գէշ, ասում էին, թէ եւ իրաւունք չունեմ խել
նրանց աղաղակութիւնը: Բայց եւ գիտեմ, որ իմ
եւ նրանց մէջ կանգնած է անաշու դատաւորը.
դա բանակալութիւնն է, հասարակաց կարծիքն
է: Ինձ համար ոչինչ էին այդ փարիսեցիական
աղաղակները. ինձ համար այլ եւս կասկած չը

կար, որ հայ աստուածաբանները հնութիւնից
գլորված քարեր են, որ նրանց համար չը կայ
ոչինչ նոր գաղափար, չը կայ ժողովուրդ, չը
կայ իրականութիւն: Եւ այնուհետեւ եւս, ճիշդ
է, շատ անգամ եմ խօսել «Արարատի» երեսին
այդ անպատիւ գործը: Այժմ էլ նոյնն եմ անում
Թող «Արարատի» էջերից անհետացող Կարապետ
վարդապետը իր առանձնութեան մէջ տասնակ
հատորներ գրէ «Աթաղականութեան եւ երկարա-
կութեան» մասին, եթէ, ի հարկէ, այդպիսի
ընդունակութիւն ունի: Բայց դարձեւ այդ
հնադարեան նիւթը բանակուր առարկայ մի
այնպիսի ժամանակ... ինչի նման էր:

Դէն գրէք, ուրեմն, անմեղութեան քօղը. ա-
մենից շատ նա ձեզ, աստուածաբան սխալա-
տիկներ, չէ սաղում: Բարեխղճութիւն ունե-
ցէք գոնէ ձեր հակառակորդի ասանքերը ճիշդ
պատմելու եւ ապա միայն յանդուրժութիւն ու-
նեցէք վճռելու երկնքի գործերը...

Կարապետ վարդապետը ինձ մեղադրում է
եւ այն պատճառով, որ եւս ուշադրութիւն չեմ
դարձրել Թոնդրակեցիների մասին գրած նրա
մի ամբողջ գրքի վրա: Ինչու է այդպէս եղել:
Պարզապէս այն պատճառով, որ եւս չեմ տեսել
այդ գրքը: Եւ ինչ մեղք է դա, միթէ ան-
պատճառ եւ պարտաւոր եմ գնել Կարապետ
վարդապետի գրքերը: Իսկ եթէ այդ գործը
տպված է եղել «Արարատում», դարձեալ զար-
մանալի չէ, որ եւս ուշադրութիւն չեմ դարձրել
նրա վրա: Ի՞նչ արած, Կարապետ վարդապետի
ճակատագիրն է դա: Անա «Արարատի» վերջին
համարում նա դառնապէս գանգատվում է, որ
նոյն «Արարատում» իր գրած մի ուրիշ յօդուածը
չէ կարդացել կամ չէ ուղեցել ուշադրութեան առ-
նել «Արարատի» մշտական աշխատակից Գ. Տէր-
Մկրտչեանը: Ի՞նչպէս կարող էր ուրեմն «Արա-
րատի» մէջ լոյս տեսած ամբողջ թուղթը իրեն
կից յօդուածով փակել նորա (Տէր-Մկրտչեանի)
պէս հմուտ եւ մանրաբանական բանասէրի աչքից»,
հարցնում է Կարապետ վարդապետը եւ պա-
տասխան, ի հարկէ, չէ գտնում:

Պէտք է յուսալ, որ Գալուստ Տէր-Մկրտչե-
անի այդ անուշադրութիւնը Կարապետ վար-
դապետը չի գրի իր նահատակութիւնների ցու-
ցակում: Իսկ իմը... Իմը ուրիշ բան է եւ ան-

կազմակերպութիւնը վերադրով, որի մասին
խօսքը շատ հեռու կը տանէր մեզ: Չը մոռա-
նանք յիշատակել փիլիսոփայ տիկնոջ ծառայու-
թիւնները նաեւ հրապարակական ասպարէզում.
նա մէկն էր այն քաջարի կանանցից, որոնք
համախմբված «La Fronde» օրագրի շուրջը
այնքան տոկունութեամբ վարում են այսօր
ֆէմինիզմի դատը. նա այդ չըջանում ամենա-
պատկառելի, ամենանշխակաւոր գէմքն էր:

Լէտուրնոյի անունը աւելի հռչակված է
Ո՞վ չէ կարդացել նրա մեծահասարակ սօցիոլո-
գիական աշխատութիւններից որ եւ է մէկը
Բիթլի, պրօֆէսոր, անթրոպօլոգ, էտնոգրաֆ,
սօցիոլոգ, փիլիսոփայ—այդ բոլոր տիպաները
միացնում էր նա իր մէջ: Իբրեւ պրօֆէսոր
նա բաւական տաղելալի էր, թէպէտեւ նրա
լաւրանք գրեթէ միշտ լինէր:

Լէտուրնո յայտնի է իբրեւ սօցիոլոգ: Նա
հրապարակ եկաւ այն ժամանակ (70-ական
թվականներին վերջերում), երբ սօցիոլոգիան
ամենաբարձր եւ ամենահեղուկ գիտութիւն-
ների երկարածիք չարքում: Դեռ եւս, ինչպէս
ասում են, սաղմային գրութեան մէջ էր, չը
նայած կօտի եւ Սպենսերի աշխարհահայտ
գործերին: Սօցիոլոգիայի մէջ Լէտուրնո հետե-
ւող է անթրոպօլոգիական կամ, որ գրեթէ
նոյնն է՝ ազգագրական չկայի, որի համեմատ
հասարակական խոշոր, ալլաքան երեւոյթները
կամ այսպէս անուանված «հասարակական խա-
րիսխները»—ընտանիք, ամուսնութիւն, կրօն,
սեփականութիւն, իրաւունք, բարոյականու-
թիւն, սօցիալական ու քաղաքական կազմա-
կերպութիւն եւ այլն, պայմանաւորվում են մի
կողմից՝ արտաքին միջավայրի—կլիմայի, ֆի-
զիկ. ու ֆաունայի, աշխարհագրական դիրքի

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆԱՄԱԿ ՇՎԵՅՏԱՐԻԱՅԻՑ

Ժճեմով, փետրվարի 27-ին

Փիլիսոփայութիւնը եւ հասարակական գի-
տութիւնները երկու նշանաւոր կորուստներ ու-
նեն այս ամսվայ ընթացքում, համարեա
միաժամանակ,—71 տարեկան հասակում գերեզ-
ման իջած երկու նշանաւոր ֆրանսիացիներ՝
տիկին Կլէմանս Ռուալէ եւ դոկտօր
Շարլ Լէտուրնո: Փայլուն աստղեր չէին
դրանք գիտական աշխարհում, բայց միջին տի-
պի գիտնականներից էլ չէին, որոնց մահը զգալի
զարգաց չէ թողնում իր ետեւից:

Երկու դէմքերը նման են իրար շատ կողմե-
րով: Երկուսն էլ բազմակողմանի մտաւոր կա-
րողութիւնների տէր՝ փորձել են իրանց ուժերը
մարդիկ այլ եւ այլ աշխարհներում՝ բիօլոգիայի,
հասարակական գիտութիւնների, փիլիսոփայու-
թեան մէջ եւ իրանց բնիկները ընդհանրա-
պէս ընթերցող զգալի կերպով եւ տուել նրանց առա-
ջնորդութեան: Բիօլոգիայի մէջ նրանք երկուսն
էլ հանդէս են գալիս իբրեւ բնափիլիսոփայու-
թեան (Naturphilosophie) միջուկը պաշտ-
ողներ՝ ընդդէմ մետաֆիզիկայի ու աստուա-
նաբանութեան: Երկուսն էլ իբրեւ լուսամիտ
գէտեր՝ դեռ երկտասարդ հասակից գրկել էին
փիլիսոփայութեան թէօրիաները եւ նրանց կորովի
փնտրումներն էին եղել Ֆրանսիայի մէջ, ուր
Կլէմանս Ռուալէի ի փեր հասարակական կարծիքը
նշանաւոր ամսամբ թշնամի էր մեծ անդլիացու
հրապարակութեանը: 1862-ին Կլէմանս Ռուալէ

Թարգմանաբար ներկայացնում է ֆրանսիական
հասարակութեանը Դարվիկի ամենանշանաւոր
փիլիսոփայութիւնը՝ «Տեսական եւ ծագումը», մի
փայլուն առաջաբանով, ուր նա բացատրում է
էվոլյուցիոնիզմի տիեզերական նշանակութիւնը:
Իսկ 70-ական թվականի Շարլ Լէտուրնո տալիս
է Թարգմանութիւնը Հէկկելի «Բնական ստեղ-
ծագործութեան պատմութեան», որը «Տեսակ-
ների ծագումը»-ից յետոյ կարող է համարվել
ամենամեղիկ աշխատութիւնը դարվիսիա-
տական հոգեւոր պարզանութեան մէջ:

Սակայն երկու պատկանելի հանգուցեաները
ծանոթ են աշխարհին ոչ իբրեւ Թարգմանիչ-
ներ: Տիկին Կլէմանս Ռուալէ, որ իր մտաւոր
ու բարոյական կերպարանքով, իր զուտ փիլի-
սոփայական կրթութեամբ հազուադէպ մի
գէմք է կանանց աշխարհում, հրատարակել է
բազմաթիւ ինքնուրոյն գրուածքներ, ուր մո-
լեգնօրէն պաշտպանում է գիտութեան իրա-
ւունքները ընդդէմ թէօլոգիական բանադառ-
ւանքների: Նապօլէօնեան ռէժիմի օրով Շվեյցա-
րիա աքսորված՝ նա 1859-ին հիմնել է Լօզա-
նում տրաքանութեան յատուկ կուրսեր կանանց
համար. պրօֆէսոր էր եւ իր գաղափարների
պիտատար միաժամանակ: չվեյցարական ազատ
հողի վրա նա արծարծում էր հրապարակական
կոնֆէրանսների մէջ գիտութեան վերջին խօսքը
եւ հայտնում էր իր ունեցիկներին: Երբորդ
հանրապետութիւնը Ֆրանսիայում հաստատվե-
լով՝ Կլէմանս Ռուալէ վերադառնում է հայրենիք
եւ անձնատուր լինում զուտ փիլիսոփայական
աշխատանքների:

1881-ին նա հրատարակում է «Le Bien et
la loi morale», ուր նա խտացնում է կենսի
ու փիլիսոփայութեան իր ըմբռնումները: Այդ-
տեղ նա ներկայացնում է բարոյագիտական խոր

ու ինքնուրոյն մի թէօրիա: Այդտեղ նա, ըստ
իր հասկացողութեան, որոշում է «բարոյական
օրէնքը», այն կնճռոտ պրօբլէմը, որի վրա դա-
րեւով գլուխ են կոտրել փիլիսոփաները:

Բարոյական օրէնքը—ասում է Կլ. Ռուալէ—
նախ եւ առաջ այն պարտաւորութիւնն է, որի
զօրութեամբ տեսակի կամ ընդհանուր մարդ-
կութեան շահը գերադասվում է անձնական
շահին: Բարոյական օրէնքի երկրորդ հրահանգն
է՝ հովանավորել ու կանոնաւորել միւր բնակա-
տեղի միջոցակի վրա օրգանական (բուսական-
անասնական) կենսի զարգացումը: Այդ երկ-
րորդ հրահանգը տրամաբանօրէն բխում է
տիկնոջ փիլիսոփայական աշխարհայեացքից, որի
համեմատ տիեզերքը կազմող վերջին ատոմ-
ներն անգամ ունեն գիտակցութիւն, եւ ոչ
միայն մտաւոր, այլ եւ բարոյական գիտակցու-
թիւն:

Երկու պարտաւորութիւններից ամենամայե-
տածղելին, ամենատիպողականը հարկաւ առա-
ջինն է: Մարդս պիտի ջանայ իր անհատական
երջանկութեան իղձերը ներդաշնակութեան մէջ
գնել համայն մարդկութեան իղձերի հետ...
Կլէմանս Ռուալէ խորապէս համոզված է, որ
էվոլյուցիան գէշիկ այդ գրութիւնն է առաջ-
նորդում: Նա հաւատում է, որ այդ էվոլյուցիան
պիտի լուծէ վերջապէս ողբալի անտիւնօ-
միան էգօիզմի ու պրոլեթարի միջեւ, որով
հետեւ, ասում է նա, հասարակական բնագոր-
դատարարութեան շնորհիւ միշտ աւելի եւ
աւելի նրբանալով՝ պիտի դառնայ գաղղ մարդ-
կութեան մէջ նոյնքան հզօր մի ֆակտօր, որ-
քան էգօիզմը:

Կլէմանս Ռուալէի ամենամեծ փիլիսոփայա-
կան գործը լոյս տեսաւ երկու տարի սրանից
առաջ. դա մի անգլիան հատոր է «Տիեզերքի

չուշտ գրված կը լինի աստուածաբան վարդապետի մարտիրոսագրութեան հէնց սկզբում։

26-րդ եւս.—Թող ներքի ինձ էլ մի բառ ըստեղծել,—աստուածաբանակերտ եմ Այն էլ ինչպէս։

Լէօ

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎԼԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Երկրաշարժից վնասվածների օգտին ստացանք հետեւեալ նուիրատուութիւնները.

Մ է չ է զ է ս է ր է ց — 168 րուբլի, որ ժողովել է Դաւիթ Փանեանց հետեւեալ անձերից. Յիւսէյին-Ղուկի-Միրզա-Շահադա 130 զու., Պարսից մարտաւորներ 150 զու., Օ. Զաւարեան 10 զու., Բանան-ուլ-մուլէ 15 զու., Միրզա-Հասան 15 զու., Արտաւազդ 5 զու., Ղուկա-Հիւսէյին 5 զու., Լիւսնօզով 10 զու., Դ. Փանեան 20 զու., Թումանեան 10 զու., Արթուր 5 զու., Մ. Գաւաթեան 2 զու., Սէյիդ-Մամադ 10 զու., Մուշեղ 4 զու., Գալբերունի 4 զու., Ղուկա-Ռիզա 5 զու. Ե. Բիշօ 50 զու., Շաֆիեզ 3 զու., Յ. Բարսիւղաբեան 4 զու., Ս. Յովնաթանեան 2 զու., Արշ. Յովհաննիսեան 10 զու., Լ. Մնջոյեան 5 զու., Ս. Մանկասարեան 5 զու., Մկրտիչ Վանեան 40 զու., Միր-Նադուլա 5 զու., տ. Ա. Փանեան 5 զու., Ա. Փանեան 5 զու., տ. Նինօ Բարսիւղաբեան 3 զու., Բ. Աւագեան 4 զու., տ. տ. Զ. Տէր-Յովհաննիսեան 2 զու., Ա. Բէկլարեան 2 զու., Գուսման է 87 զու. 458 զու.

Պ օ լ տ ա վ ա յ ի ց — Պ. Զաքարեանից 10 զու.

Պ ե տ ե ր ք ու ր զ ի ց, ուսանող Հայկ Մէլիք-Հայկազեանից, 56 զու., որ նա ժողովել է հետեւեալ անձերից. Աւ. Գալստիսեան, Իշխ. Արդութեան, Կաֆիեան, Տէր-Ստեփանեան—5-ական զու., Սահակեան, Սուլթանյան, Դոյուխանեան, բժ. Մարգարեան, Մի. ուն—3-ական զու., Մ. Մարկոզով—2-ական զու., Ս. Ղոնդաղազեան, Յովհաննիսեան 4., Փահրանեան, Լեւոնեան, Յովհաննիսեան—1-ական զու., Ս. Ար.—1 զու. 5 զու., Ալլահիէրեան, Կ. Մէլիք-Շահն., Անյայտ, Զաւրիեւ, Զ., Կ. Աղաւ, Ասփաղուրով—1-ական զու., Յ. Ար. 75 զու., Ամիր 50 զու., Ա. Դ. 50 զու., Ս. Ստոյան 60 զու., Մ—15 զու., Դաւիթ 55 զու., Մէլիքեան 50 զու., Տիրօ 30 զու., Ուն 10 զու. Գուսման է 56 զու.

Կ ր ա ս ն օ լ օ ղ ա լ ի ց, Ա. ք. Վարդանեանց 12 զու., որ նուիրել են հետեւեալ անձերը. Ն. Տէր-Յովհաննիսեան 10 զու., Ե. Կ. Վարդանեանց 2 զու. Գուսման է 12 զու.

Կ ր ա ս ն օ լ օ ղ ա լ ի ց, Ի. Միկաբեանից 18 զու. 50 զու., որ ժողոված է Կրասնովոյսկի հայերից։

Ը ն դ ա մ ե ռ 258 զու. 50 զու., իսկ նախկին ստացվածների հետ միասին 4277 զու. 43 զու.

ՆԱՄԱԿ ԵՄԱՄԱՆՈՒՑ

Փետրվարի 24-ին

Գիշերվայ ժամը ուղիղ 12 եւ 45 րոպէին

ու տօպօգրաֆիական պայմանները—համազուտ մար ազդեցութեամբ, միւս կողմից՝ ցեղական առանձնայատկութիւններով, որոնք վերածվում են վերջին անալիզով մի եւ նոյն կօմիտեական միջավայրի ազդեցութիւններին։

Ոչ մէկը կրնա ասել մեծ զարկ չէ ւժեղ սօցիօլօգիայի այդ կարեւոր ճիւղին, ինչպէս Լէտուրնօն։ Նրա բազմաթիւ աշխատութիւնները մի պատկանելի գրադարան կարող են կազմել։ Նրանցից իւրաքանչիւրը ուսումնասիրում է հասարակական որ եւ է ֆակտոր իր ծագման եւ զարգացման մէջ։ Ներկայումս գոյություն ունեցող վարդերի ցեղերի վրա հիմնած Լէտուրնօն պատկերացնում է մեր առջեւ մարդկային նախապատմութիւնը իր բոլոր արժանիքներով։ Վճիռ, կենդանի լեզուով ուրուագծում է նա քաղաքակրթութեան յարմարութեան էվոլյուցիան, սկսած անյիշատակ ժամանակներից, նկարագրում է հին ու մարած քաղաքակրթութիւնները՝ Մեքսիկայում, Պերուում, Չինաստանում, Հնդկաստանում, Եգիպտոսում, Ասորեստանում, Փիւնիկիայում եւ այլն։

Նա սօցիօլօգիայի թէօրեական չէ բառնա՝ ճշգրիտ նշանակութեամբ. նա չէ ձեւակերպում հասարակական զարգացման օրէնքներ, այլ անխնայ մարտում է փաստեր ու գիտողութիւններ զանազան գրքերից, աշխարհաշրջիկ ճանապարհորդների յուշատետրերից եւ հում նիւթերի հսկայական քաօսի մէջ նա զատում է ընդհանուր փաստեր, եզրակացութիւններ Այդպէս է անում եւ Սպենսերը։ Նա եւս չէ ճանապարհորդում, անձամբ չէ գիտում, այլ հաւատում է ուրիշների ուսած փաստերը ու գիտողութիւնները եւ ընդհանրացումներ է անում։

Դարձեալ երկիրը սկսեց բաւական զգալի ոյժով շարժվել։ Պատրաստվել էի ուրիշ բան գրել, բայց ստիպված եղալ այս հարցերի վերջէ գրել, նոյնպէս ժամը 3-ին, երկիրը ցնցվել է, բայց աւելի թեթեւ, քան հիմա պատահեց։ Վերջին երեք օրերը, կարելի էր ասել, խաղաղված էր երկիրը տատանումից, եթէ այս գիշեր խաղաղ անցնէր։

Այսպէս լալի աղէտի ժամանակ այնտեղ գտնվող բժիշկ Ուսպենսկի, որը իր մարդասէր ծառայութիւններով աչքի ընկաւ, բարի համբաւ եւ պաշտօնական գրաւոր չնորհակալութիւն ստացաւ, այժմ ահա երկու ասարի է, որ Շամախում գինւորական բժշկի պաշտօն է վարում։ Եկած օրից այստեղ եւս ժողովրդի սէրն ու յարգանքը վայելեց արժանաւոր բժիշկը։ Նա, իբրեւ մարդ եւ իբրեւ բժիշկ, այն աստիճան բարեխիղճ եւ գործունեայ է, որ շատերի բերանում հայր մականունն է վաստակել։ Ծաւկատագիրն էլ կարծէք դիտմամբ նրան առաջնորդում է այնպիսի տեղեր, ուր նրա ներկայութիւնը տառապեալների համար, իբրեւ մարմնացած օգնութիւն՝ շատ կարեւոր է։

Բժիշկ Ուսպենսկի, երբ նորեւթ թիֆլիսում էր, իշխան կառավարչապետը լսած լինելով նրա կատարած ծառայութիւնները Ախալքալաքի գաւառում երկրաշարժի ժամանակ եւ յետոյ չարունակ, իբրեւ փորձառու եւ կատարեալ վրաստանելի մի մարդու՝ հրաւիրում է իր մօտ եւ յանձնարարում է, որ Շամախի վերադառնալուն պէս՝ մոտէ գործի մէջ, մասնակցէ կօմիտեայի խորհուրդներին եւ իբրեւ փորձով մարդ հսկէ նպատակների բաշխման գործի ընթացքին։

Յարգելի բժիշկը այդ մասին, ինչպէս իշխան կառավարչապետից ստացած հրաման, ամսիս 23-ի գիշերվայ նիստում յայտնեց եւ առաջարկեց՝ նորին պաշտօնափայլութեան հրամանները գործադրելու հնարաւորութիւն ունենալու համար՝ ընդունել իրան եւս իբրեւ կօմիտեայի անդամ։

Իսկապէս զարմանալի է, թէ ինչպէս կօմիտեայի տեղալին այսպիսի ոյժերին աջակցող է արել, եւ նրանք պարտաւորվում են իրանք մտենալ եւ յայտնել, որպէս զի իրանց անդամ ընդունեն։ Բայց կօմիտեայի պարտաւոր է դեռ պ. Նահանգապետի հաճութիւնն էլ ստանալ։

Կօմիտեայի մէջ տեղալին ինտելիգենցիայից գրեթէ մասնակցողները չը կան։ Դրանք եկւորներ են, որոնք մեծ մասամբ ոչ տեղալին պայմանների հետ են լաւ ծանօթ, ոչ էլ մարդկանց են լաւ ճանաչում։ Բայց այսպիսի դէպքերում ուղեւոր կարող են նշանաւոր դեր կատարել եւ պիտանի դառնալ, ըստ այն մարդիկ, որոնք ժողովրդի ամեն զատակարգի են խաւերի հետ գործ ունեն, ինչպիսիներն են, զիցուք, բժիշկները, հոգեւորականները, իրաւաբանները եւ այլն։ 26-րդ դրանք, մասնաւոր առաջնիւնքը, գրեթէ ամեն օր չիում ունեն ժողովրդի հետ։ Անհրաժեշտ է կօմիտեայի ոյժերը թարմացնել, գործի

Լէտուրնօն չունի, ի հարկէ, ընդհանրացման այն վիճիւրի կարողութիւնը, որով օժտված է անգլիացի փիլիսօփան։ Բայց նա սոսկ կօմիտեայի տար էլ չէ, ինչպէս կարծում են ոմանք։ Նա յաճախ շատ չելուստի պարզութիւն ու լոզրում նոյն Սպենսերի վրիպումների դէմ, քննադատում է նորինակ, նրա սանձարձակ ինդիվիդուալիզմը, նրա թէօրիան՝ ապագայ վարչական անխախտութեան մասին, հեղուկ է սպենսերական նշանաւոր մետաֆորը, որով նոյնացվում են հասարակական եւ կենդանական օրգանիզմները։

Լէտուրնօն կիրառում է ամեն տեղ նիւթապաշտական էվոլյուցիօնիզմի մեթօդը եւ ուսումնասիրելով հասարակութիւնների անցեալն ու ներկան՝ նա մտքի թռիչքներով երբեմն հրահանգիչ մարգարէութիւններ է անում նրանց ապագայի մասին։ Այդպէս, օրինակ, «քննադատի էվոլյուցիայի» մէջ նա պնդում է, որ «միատեղի ամուսնութիւնը», որը ժամանակակից հասարակութեան խաբարներից մէկն է, դատաւարտված է վաղ թէ ու չընթացաւ։ Դրանք որ, ասում է նա, մարդ-անհատները հասարակական էվոլյուցիայի ընթացքում միշտ աւելի եւ աւելի պիտի կապվեն իրար հետ համարաշխույթեան կապով—քննադատը վաղ թէ ու չտեղի կը տայ հասարակութեան (այդպէս է եղել արդէն մարդկային էվոլյուցիայի արշալոյսին), կը ոչնչանան ամուսնութեան հետ կապված բոլոր ձեւակաւութիւնները, դաշինքները եւ ընտանիքը ձեւակաւութեան կանխատեսում։ Այդ գաղափարը, կարելի է ասել, հասարակական դիտութեան վերջին խօսքն է։

«Սեփականութեան էվոլյուցիայի» մէջ Լէտուրնօն ընդհանրաւորում է հոգեւ ապագայում ժամանակութեան սկզբնաւոր վերացումը։ «Կրօնի

հրաւիրելով տեղալին ինտելիգենտ անձերին, որոնք անուշտ իբր տեղացիներ կարող են շատ շահաւէտ լինել. գործի աշող ընթացքը այդ է պահանջում։

Սմբատ Սարգիսեան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒՅԸ

Փետրվարի 26-ին

Փետրվարի 21-ին, Վարդանանց տօնին, տեղի ունեցաւ Մարդասիրական ընկերութեան նորաբաց «Աշխատանք»-ի տան հանդիսաւոր բացումը։ Աշխատանքի այդ տունը, ինչպէս ժամանակին հարողներն են, թէեւ սկիզբն է առել անցած ունիսի 15-ին, բայց մինչեւ այժմ իր պաշտօնական գոյութիւնը չէ արտայայտել, հանդիսաւոր բացումն, հասարակութեան մատչելի, շօշափելի դառնալու առիթ չէ ունեցել։

Այդպէս է ցանկացել «Մարդասիրական ընկերութեան» վարչութիւնը, Նա չէ կամեցել բաւականաճալ ընկերութեան ընդհանուր ժողովի որոշման լոկ իրադրութեամբ, չէ ցանկացել անբովանդակ ձեռնարկութեամբ հրապարակ հանել եւ դրանով էլ իր պարտքը կատարած տեսնել, այլ ձգտել է գաղափարի իրադրութեան զինելու եւ «չը լինելու» հարցը լուծել իրականապէս ու այնպէս ինչպէր հրապարակ հանել։

Ոսքը չը կայ, որ անգործին գործ տալը, աշխատանք չունեցողին աշխատանք ներկայացնելը, ծոյլին, դատարկապարտին գործի ընտելացնելը հրաշալի բան է, սակայն ինչ աստիճան իրադրութիւն եւ նպատակալարմար է այդ աշխատանքի տներ կոչված ձեռնարկութիւնների միջոցով—ահա իսկական խնդիրը, որ թեր եւ դէմ կարծիքների եւ երթագրութիւնների միջոց տեղի է տուել։

Տեղիս աշխատանքի բացման գուզնթացել են նոյնպէս նոյն կարծիքները, նոյն երթագրութիւնները։ Կատարեալ աջողութեան թերահաւատութիւնը շատ յաճախ նոյնպէս զգալի է դառնել, սակայն վեց ամսվայ փորձը այսօր, կարծէք, կոչված է կրկին եւ կրկին անգամ ապացուցանելու, թէ որտեղ կայ եռանդ, ջանք, աշխատութիւն, այնտեղ կայ եւ գործ, եւ աջողութիւն։ Այդ էր ներշնչում հանդէսը։ «Աշխատանք»-ի տան գործում ընկերութեան վարչութիւնը աջակց է ընտրել իրան կողմնակի օրիորդներին, տիկիներին եւ պարոնների մի խումբ ու այնպէս զեկալարվել. ուրիշ խօսքով, գործի են հրաւիրված եղել կողմնակի նոր ոյժեր, որոնք կրել են գործաւարտութեան մեծագոյն մասը։ Երբեք այդ հանգամանքի գործը եւ ընդարձակ ծաւալ է ստացել եւ սպասածից աւելի համակրութիւն վաստակել։

Հանդէսը գրաւել էր երկսեռ ստուար մի բազմութիւն։ Կային եւ օտարազգիներ։ Ծաւարանի դահլիճում ի ցոյց էին դրված աշխատանքի տան արտադրած իրեղենները՝ բազմազանիւնք եւ բրդեղէն տեսակ-տեսակ

էվոլյուցիայի» մէջ՝ ժամանակակից հաւատալիքների իսպառ խաւարումը։ «Քաղաքական էվոլյուցիայի» մէջ նա ծաւալում է մեր առջեւ վաղեմի ժամանակների մարդկային այլաբանական սարսափեցնող պատկերներ—հօգրների վայրագութիւնը եւ թոյլերի անարգ ստրկատուութիւնը... Մարդ զարմանում է, թէ ինչպէս բունակապէս այդ սարսափների, արեան այդ խորանձանքների միջից կարողացել են առաջանալ աշխատութեան եւ արդարութեան սաղմերը։

Իբրեւ ջերմ դարվիճական՝ Լէտուրնօն ամեն մի խոչոր հասարակական երեւոյթի արմատները փնտռում է կենդանիների մէջ, մարդկութիւնը անանութեան շարունակութիւնն է, անթրօպօլօգիան կենդանաբանութեան լրացումը։ Ընտանիքի եւ բարոյականութեան էվոլյուցիայի մէջ նա ներդրում է անձնագոյութեան, սիրոյ եւ ընկերական համերաշխութեան փաստերը կապիկներին, թռչուններին, մրջյուններին, մեղուներին աշխարհում։ Մինչեւ իսկ արդարութեան եւ սեփականութեան սկզբնաւորութիւնը նա տեսնում է կենդանիների մէջ։ «Իրաւունքի էվոլյուցիայում» նա մետաֆիզիկների «արդարութեան շնածին գաղափարին» հակադրում է պարզ՝ կենդանիների անդադարձ գործողութիւնը (acte reflexe), որ առաջանում է ինքնապաշտպանութեան պահանջից։

Իրաւունքի եւ արդարութեան տաննակ տարիների առաջադիմութիւնը նա գտնում է ոչ իբրեւ իրաւագէտ կամ փիլիսօփա, այլ իբրեւ սոսկ անթրօպօլօգ։ Մի խոչոր պարագա զգալի է այնուամենայնիւ Լէտուրնօյի մեծ գիտական ծառայութեան մէջ—այն՝ որ չը նշանակ իր շատ ընդլայնու ու զրական մտքին նա համարեալ բոլորովին անտան է անում է «տնտեսական

գործունեւոր, պատրաստի սպիտակեղէններ, հագուստներ, կազմած գրքեր, պատրաստ չեմօգաններ, թղթէ արկղիկներ եւ քսակներ, մոխրամաններ, փայտէ կոթեր եւ այլն։ Օրինակ թեան մաղթանքը կատարելուց յետոյ՝ Մարդասիրական ընկերութեան նախագահ պ. Ս. Երուսիւնեանը արտասանեց ոգեւորված մի խոյր պատմական մի ամփոփ տեսութիւն էր հանրապէս ազգերի պատմութեան մէջ ունեցող կարօտեաններին օգնութիւն հասցնելու եղանակի աստիճանաբար բարեփոխման մասնաւորապէս աշխատանքի տան նպատակալարմարութեան մասին։

Յիտոյ աղի ունեցաւ մասնաժողովի զեկացիքի ընթերցումը, որից երեւաց, որ յուն 15-ից մինչեւ ներկայ տարվայ յունվարի 1-ը Աշխատանքի տանը գործ են ստանձնել 356 4623 զ. օրավարձով. դրանցից 60 հոգի տղաների, 121 հոգի կանայք, իսկ 169 հոգի երեխաներ։ Օրավարձը տատանվել է՝ երեխան համար 2—30 կօպէկ, կանանց համար 10—35 կօպէկ։ Բացի օրավարձից աշխատանքները ստանում են ձրի թէյ հացով ձաշ։ Բաւականաճալ վարձատրվողներին նուրբ ամսից սկսած այլ եւս ձրի չէ տրվում։ Իւրաքանչիւր ձաշ հաշուում է կօպէկ։ Բացի աշխատանքի տան մէջ աշխատող, գործ տրվում է եւ տներում կրելու համար, գլխաւորապէս նրանց, որ հնարաւորութիւն չունեն տներից բացալու իւր եւ կամ երեխաներին իրանց հետ աշխատելու տուն բերելու։ Հանդէսը վերջանալով յետոյ հանդիսատեսները խումբ-խումբ պարզորոշվել աշխատանքի տան բաժանմունքներ—ուր փորձի համար ընթանում էր սովորական աշխատանք—գործ արտով հեռացան։ Հանդիս տեսների թւումն էր եւ Բագուի պարոն Հայի-Ջէյալ Արդին Թաղիւմը, որը իր հանկրութիւնը արտայայտեց 500 ռուբլու նուիրութեանը... Նուիրեցին 200 ռուբլի եւ երբուգեղանները։

Ն. Դաւթեան

ՆԱՄԱԿ ԽՐԱՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 26-ին

Անհրաժեշտ եմ համարում յայտնել ընթերցողներին, որ «Մշակի» 41-րդ համարում, «Մի քանի արկղի» մէջ տպագրված նամակ տպագրվել է առանց իմ համաձայնութեան եւ գիտութեան։ Այդ նամակը ուղղված էր խմբագրութեանը որպէս բողոք, որի հրապարակ հանդիսաւոր միջոցէ անգամ չէ անցել։

Ես մի քանի անգամ չէի կարող երթալ որ այդ տեսակ մի նամակ կարող է յանկարտապարտութեան յանձնվել, ուստի կը տատանվէ յիշել գրութեան մէջ, թէ ես թոյլ չեմ տալիս նրա հրատարակումը, վերադարձնելու մարտիմ մի խմբագրի համար արգելել նրան, որը նա ինքը անկարելի պիտի համարէ։

Գործօնները ահագին, գերակշռող դերը սարակական ֆակտորների աստիճանական զարգացման մէջ։

«Օրալի էվոլյուցիան» ցոյց է տալիս իր բարոյական հասկացողութիւնների անվերջ լրացանութիւնը՝ նայած տեղին ու ժամանակին կլիմային, ցեղական ու անհատական առանձնայատկութիւններին եւ այլն եւ այլն։ Բարոյականութեան մէջ Լէտուրնօն ուսուցիտաւոր է, օգտապաշտ փիլիսօփայութեան հետեւող որի նշանաբանն է՝ ամբողջական բարեբանութեան թիւ (Le plus grand bien plus grand nombre)։ Բարոյագիտութիւնը անհոգ է չորս նշանաւոր շրջաններ. 1) Անհատական շրջան, ուր մարդիկ ուսում են իրար, տիրապետում է մարդակերութիւնը՝ տեղ տեղ նուիրագործված կրօնական հաւատալի ներով։ Այդտեղ մարդը շատ անասուններից անտարբէր է հանդիսանում։ 2) Վայրենական շրջան, ուր մարդակերութիւնը տեղի է տալիս գերութեան։ 3) Բարբարոսական շրջան, ուր տիրապետում է ճորտութիւնը։

Մեղմացումն է հնադարեան գերութեան վերջապէս, մերկան տիւ (փող պաշտօնները, որ մեղմացումն է ճորտապարտութեան մէջ)։ Եվոլյուցիան շարունակվելով կը վերացնէ վարձու աշխատանքի ամօթաբեր սխտեմը։ Վերին աստիճանի օպտիմիստ է Լէտուրնօն։ Կատարական փիլիսօփայութեան մէջ Պետլեմիդը չունի գոյութեան իրաւունք. պէտք է կողմ լինել, ասում է նա, մարդկային առաջադիմութիւնը ժխտելու համար։

Մ. Բ.

Электропечатня Грва. Ипат. Т—ва. Б. Ванская ул.